

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Daily News-ի հետ կատարուած փոփոխութիւնը.— Զինաստանը. նոր ուսումնասիրութիւններ նրա պատմութեան և քաղաքական կեանքի վերաբերեալ.— Մահմեդական երկիրների պատմութեան ուսումնասիրութիւնը Անգլիայում. Բաղդադը և Արասեանների խալիֆայութիւնը.— Եգիպտացի-տութիւնը և նորութիւններ այդ ձիւղի վերաբերեալ.— Հետաքրքրութիւն Ռուսաստանի գրական երեւոյթներով:

Ներկայ 1901 թուի յունուարի ընթացքում անգլիական լրագրութեան մէջ նշանաւոր փոփոխութիւն առաջ եկաւ, այն է՝ «Daily News» թերթի խմբագրութիւնը հիմնովին փոփոխութեան ենթարկուեց: Այդ մասին Review of Review ամսագրից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Լոնդոնի առաջնակարգ լրագրները իրանց խաղացած դերով աւելի կարեւոր յոյժ են ներկայացնում, քան պարլամենտի տասնեակ անդամներ: Եթէ վերցնենք այժմ ունիօնիստների թիւը պարլամենտում 402, նրանց ներկայացնում են մամուլի մէջ՝ Times-ը, Standard-ը, Daily Telegraph-ը, Morning Post-ը և մասամբ Daily Chronicle-ը (Հարաւային Աֆրիկայի պատերազմի ինչքում), յետոյ Daily Mail-ը և Daily Express-ը, այսինքն նրանք ունեն 7 օրգաններ. իսկ աղատամիտ և իրանդական կուսակցութիւնը, որ ունի 268 տեղ պարլամենտում, արտայայտւում է միայն Daily News և Morning Leader լրագրներով. այսպիսով, այն ինչ նախարարութեան կողմնակից իւրաքանչիւր օրգանը ներկայացնում է պարլամենտի 57 անդամներին, իւրաքանչիւր աղատամիտ թերթը ներկայացնում է 134 հոգի: Այս դէպքում ամեն մի օրգանի անցնելը այս կամ այն հոսանքի կողմը, մեծ կարևորութիւն է ներկայացնում... Այդպիսի կարևորութիւն ունի և այն փոփոխութիւնը, որին նորերումս ենթարկուեց Daily News-ը... 50 տարի սրանից առաջ, երբ այդ թերթը, սկսեց հրատարակուել, նա պատկանում էր 29 բաժնետէրերից բաղկացած մի ընկերութեան: 80-ական թուերի վերջերում այդ բաժինների $\frac{3}{4}$ մասը կենտրոնացաւ երեք անձանց ձեռ-

քը, իսկ մնացած $1\frac{1}{4}$ մասը ցրուած էր զանազան ձեռքերում: Վերոյիշեալ 3 անձինք էին պ. Ա. Մօրլէյ, Հ. Յպպենհէյմ և յայտնի Հ. Լաբուշէրը: Այդ եռապետութիւնը ղեկավարում էր թերթը, հրաւիրում էր խմբագիր, աշխատակիցներ և տալիս էր ներքան ընդհանուր ազատամիտ ուղղութիւն: Հանգուցեալ «Մեծ ծերունի» Գլադստօնի մահից յետոյ այդ թերթը Րօզբերիի ազդեցութեան ներքոյ՝ հետզհետէ գրաւուեց ժամանակակից իմպերալիզմի հոսանքով, որին և հետևում էր մինչև ներկայ Յունուարը: Այդ էր պատճառը, որ արմատական Լաբուշէրը ստիպուած հեռացաւ թերթից, վաճառելով իր բաժինները միւս 2 ընկերներին 90,000 ֆունտ ստերլինգով... Այդ ժամանակը դեռ թերթի ամենատարածուած միջոցն էր. կապիտալիստ Օպպինհէյմը հրաւիրեց խմբագիր՝ Ա. Ֆրիկայի հերոս Միլնէրի բարեկամ հրապարակաօս Կուկին, որ արագ քայլերով տանում էր թերթը նոր հոսանքով՝ ինչպէս երևաց, դէպի անկումը... Դա Ջեմսօնի արշաւանքից անմիջապէս յետոյ էր. լրագիրը ջերմ կերպով քարոզում էր Սեսիլ Րօբսի գաղափարները, և գրանով նա միւս լրագրների հետ միասին՝ անսիրտաբիրնելի վրաս հասցրեց Անգլիային: «Daily News»-ը ունէր ընթերցողների որոշ և մեծ չըջան թէ՛ Անգլիայում և թէ՛ արտասահմանում, որոնց աչքում նա հեղինակութիւն էր վայելում, և ի հարկէ նրա հայեաքքները մեծ ազդեցութիւն ունեցան... Բայց հետզհետէ ծայրայեղ իմպերիալիստական քաղաքականութիւնը սկսեց գրգռել զայրոյթ շատ գլադստօնականների մէջ, և շատերն սկսեցին հեռանալ լրագրից ու մտածել նոր թերթ հիմնելու, որ լինի իրանց հայեաքքների արտայայտիչ: Դրանք վերջապէս կազմում են մի նոր ընկերութիւն շատ բաժնետէրերից բաղկացած, որոնց մէջ մտնում են շատ յայտնի գրիչներ զանազան ասպարէզներում. բաժինների թիւը 200,000 է, իւրաքանչիւրը մի ֆունտ ս. (10 ո.) արժողութեամբ: Գլխաւոր հիմնադիրները 7 հոգի են, Բ. Լեմանի նախագահութեամբ. դրանք որոշում են մի լրագիր հիմնել ազատամիտ-արմատական գափարների պաշտպանութեան համար: Այդ միջոցին Օպպենհէյմը առաջարկում է դրանց գնել «Daily News»-ը. բանից երևում է, որ ծայրայեղ իմպերիալիստ ուղղութիւնը լրագրի անկման պատճառ էր դարձել. ընթերցողները փոքր առ փոքր յետ էին քաշուել թերթից, բաժանորդների թիւը սաստիկ նուազել էր, այնպէս որ մինչդեռ մի քանի տարի առաջ Լաբուշէրը իր մասը միայն (այսինքն 8 բաժին 27-ից) ծախել էր 90,000 ֆունտ ստերլինգի, այժմ բոլոր բաժինները անցաւ նոր խմբի ձեռքը 100,000 ֆունտով:—Նոր հրատարակութիւնները հրաւիրեցին իբրև խմբագիր յայտնի Mas-

singham-ին, որ առաջ արմատական «Daily Chronicle»-ի խմբագիրն էր և հեռացել էր այդ թերթից դրանից փախչելու, երբ վերջինս հիմնովին փոխեց իր վերաբերմունքը դեպի պատերազմը... Նոր խմբագրութեամբ ներկայ յունուարից «Daily News»-ը դարձաւ խիստ զիմադրող թերթ պատերազմի հարցում, և նրա բաժանորդների թիւը սկզբից աւելացաւ. մի ամիս չանցած՝ խմբագրութեան փոփոխութիւնից յետոյ արդէն նա օրական տարածուում է 11,000 օրինակ աւելի, քան Օպպենհէյմի օրով... Երևում է, թէ որքան ուժեղանում է անգլիական հասարակութեան մէջ հակաշարժումը իմպերիալիզմի դէմ...

Այժմ անցնենք զրականութեան և գիտութեան նոր երեւոյթներին. ինչպէս և անցեալ մեր տեսութեան մէջ, այս անգամ էլ արեւելքի ուսումնասիրութիւնը մեր առանձին ուշադրութեան առարկայ է լինելու. եւ այս դէպքում մենք ի նկատի ունենք թէ՛ Փղբը-Ասիան, Առաջաւոր-Ասիան ու Եգիպտոսը և թէ՛ Հնդկաստանը, Արեւելքը, այսինքն Չինաստանը, Եպոֆանիան:

Չինաստանի վերաբերեալ E. Parker-ը նորերումս հրատարակել է մի բազմակողմանի ուսումնասիրութիւն «China, her History, Diplomacy and Commerce from the Earliest Times to the Present day» վերնագրով («Չինաստանը, նրա պատմութիւնը, դիւանագիտութիւնը և առևտուրը հնագոյն ժամանակներից մինչև մեր օրերը»): Այդ գիրքը «Athenaeum» գիտնական հանդէսի վկայութեամբ անհրաժեշտ մի ձեռնարկ է այն բոլոր անձանց համար, որոնք ցանկութիւն ունեն հիմնաւորապէս ծանօթանալ Չինաստանի արդի դրութեան հետ: Սկզբում հեղինակը մի քանի գլուխ նուիրում է երկրի աշխարհագրութեանը և ապա անցնում է առևտրին և կայսրութեան վարչական գործերի նկարագրութեանը: Պատմելով օտար պետութիւնների յարաբերութիւնների մասին՝ Պարկէրը առանձնապէս շեշտում է, որ Կիաօչօուի վերցնելը Գերմանիայի ձեռքով ամենից շատ նպաստեց այժմեան ճգնաժամի առաջ գալուն: Հեղինակի վիճակագրական տեղեկութիւնները առևտրի մասին առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում, ցոյց տալով, թէ 1880 թուից մինչև այժմ որ տէրութիւնը ինչ չափով առաջ է տարել իր գործառնութիւնները այդ երկրում: Մի քանի ընդարձակ գլուխներ նուիրուած է գրուածքի մէջ չինական զօրքի կազմակերպութեանը, հարկահանութեան եղանակի և ապա ժողովրդի կեանքին և բնաւութեանը...

Մի հետաքրքիր գօլովմենտ է հրատարակուած անցեալ ամսին Լօնդօնում չինական քաղաքական կեանքին վերաբերեալ-

դա թարգմանուած է չինարէնից և կրում է հետեւեալ վերնագիրը. «China's only Hope: an Appeal by her Greatest Viceroy, Chang Chih-tung, with the Sanction of the Present Emperor, Kwang Su» (Չինաստանի միակ յոյսը. հրաւէր մեծ փոխարքայ Չանգ-Չի-տունցի, կայսր Կվանգ Սուի հաւանութեամբ): Գրքի հեղինակը յառաջագէտ կուսակցութեան գլխաւոր պարագլուխներէց մէկն էր Չինաստանում և իր գործունէութեամբն ու ռուսաւոր հայեացքներով մեծապէս նպաստել է վերանորոգչական շարժմանը այդ երկրում, միշտ պաշտպան հանդիսանալով եւրոպացիներին և նրանց կարգերին: Լի-խունգ-Չանգը, նրա գլխաւոր ախոյեանը, իր բոլոր ազդեցութիւնը գործադրելով պաշտոնում, կարողացաւ Չանգ-Չի-տունցին նշանակել տալ փոխարքայ մի հեռաւոր մասում և ախպիտով չէզոքացնել նրա ազդեցութիւնը: Բայց այնտեղ էլ նա իրան այնպէս արժանաւոր կերպով պահեց, որ աւելի բարձրացրեց իր անունը կայսեր աչքումը: Լինելով կողմնակից բեֆօրմների և եւրոպական կարգերի, Չանգը միևնոյն ժամանակ մնում է չինացի և կոնֆուցիոսին հետևող. նրա նշանաբանն է. «Չինաստանը չինացոց համար»: Իր վերոյիշեալ հրաւէրի մէջ նա ապացուցանում է, որ Չինաստանը յեղափոխութիւնից ազատելու համար երեք անհրաժեշտ միջոցներ կան. «առաջին՝ պահել թագաւորող հարստութիւնը (դինաստիան), երկրորդ՝ պահպանել սրբազան կրօնը, և երրորդ՝ պահպանել չինական ցեղը»: Այդ երեք նպատակներին հասնելու համար նա առաջարկում է բաց անել զանազան տեսակի դպրոցներ արեւմտեան ուսուցման եղանակով, հաստատ պահելով միևնոյն ժամանակ Չինական հիմունքները: Նա խորհուրդ է տալիս թարգմանել ընտիր եւրոպական գրքերը չինարէն լեզուով, մտցնել կատարեալ կրօնական համբերողութիւն: Քննադատելով ներկայ չինական կարգերը, հեղինակն ասում է. «Բոլոր երկիրներից միակ Չինաստանն է, որ վերջին յիսուն տարուայ ընթացքում մնացել է խուլ և քնած: Մեր պաշտօնեաների մէջ չը կայ գոնէ մէկ հասկացող անձն. մենք չունենք ոչ մի իսկական գիտնական և ընդունակ գեղարուեստագէտ, մենք չունենք աչքի ընկնող ներկայացուցիչներ արտասահմանում, իսկ մեզ մօտ չունենք կանոնաւոր դպրոցներ...»: Բայց նայելով պետութեան այս թոյլ կողմերին, նա մեծ յոյսեր ունի իր հայրենիքի ապագայի վրայ: Նա հաւատում է, որ գիտութիւնների զարգացումը կարող է վերածնել իր հայրենիքը, և հետո չէ այն ժամանակը, երբ ներկայումս թոյլ և տկար կայսրութիւնը կը նորոգի իր ոյժերը իբրև մի հսկայ:

Մահմեդական աշխարհի պատմութեան վերաբերեալ նոյնպէս հրատարակուել է մի շատ կարեւոր ուսումնասիրութիւն հետեւեալ վերնագրով.

«Baghdad during the Abbasid Caliphate»— by G. Le Strange. («Բաղդադը Աբբասեանների խալիֆայութեան ժամանակ» Լը Ստրանտ-ի): Ինչպէս խոստովանում է «Athenaeum» գիտնական շաբաթաթերթը, Արեւելեան երկիրների ուսումնասիրութիւնը Անգլիայում մինչև վերջին ժամանակները շատ քիչ էր տարածուած, և ինքնուրոյն ու հիմնաւոր գրուածքներով այդ շրջանում Փրանսիան, Գերմանիան և Ռուսաստանը Անգլիայից բարձր էին կանգնած: Բայց նորերումս անգլիական արևելագէտները հրատարակեցին մի քանի գրքեր, որոնք կարող են մրցել ցամաքային երկիրների ամենալաւ գրուածքների հետ: «Օրինակ՝ մահմեդական Արեւելքի վերաբերեալ, ասում է լրագիրը, մենք ունենք այնպիսի գիտնականներ, ինչպէս պրօֆ. Ջիբբ իր «Օսմանեան բանաստեղծութեան պատմութիւն» ուսումնասիրութեամբ և Ե. Բրաուն, Կեմբրիջի համալսարանի պրօֆեսոր, որ «Ասիական ընկերութեան հանդէսի» գլխաւոր աշխատակիցն է: Այդ թուին պատկանում է և պր. Լը Ստրանտ-ը, որի վերոյիշեալ աշխատութիւնը ահագին նշանակութիւն կ'ունենայ մահմեդական աշխարհի ուսումնասիրութեան համար»:

Հիմնուելով բազմատեսակ մանրամասն տեղեկութիւնների վրայ, հեղինակը կազմել է 8 առանձին քարտէշներ կամ պատկերներ, որոնք ներկայացնում են Բաղդադը նրա զարգացման զանազան աստիճաններում. և այդ պատկերների համար հեղինակի գլխաւոր ուղեցոյցը եղել է Տիգրիս գետը. բայց ի նկատի ունենալով, որ Տիգրիսը վերջին հազար տարուայ ընթացքում նշանաւոր կերպով փոխել է իր հոսանքը՝ հեղինակը աշխատել է օգտուել և ուրիշ աղբիւրներից՝ այդ թոյլ կողմն ուղղելու և գետի սկիւնական հոսանքը մօտաւորապէս նշանակելու համար: Ամբողջ գրուածքը բաղկացած է 27 գլուխներից, և բացի երեք վերջին գլուխները, ներկայացնում է, կարելի է ասել, մի տեսակ ընդարձակ կօմմենտար (բացատրութիւն) վերոյիշեալ 8 պատկերների համար, տալով մանրամասն նկարագրութիւններ քաղաքի զանազան մասերի, ջրանցքների, պալատների, մզկիթների և փողոցների. միայն վերջին երեք գլուխ (22, 23 և 24) պարունակում են իրանց մէջ մի ամփոփ տեսութիւն Բաղդադի պատմութեան Աբբասեան խալիֆաների շրջանում՝ սկսած նրա հիմնադրութիւնից մինչև անկումը մօնղոլների աշխարհակալութեան ժամանակ 1258 թուին Բրիտտոսից յետոյ: Բաղդադի պատմութեան և տեղագրութեան համար այդ շրջանում (V III—

XIII դար Բ. յ.) հեղինակի տրամադրութեան տակ կային բաւական թուով մահմեդական պատմագիրներ, մանաւանդ 9-որդ և 10-որդ դարերի վերաբերմամբ յայտնի են Եաղուբի և Իբն Սեբարիօն արաբական պատմագիրները, որոնց գրութեանքի վրայ առանձնապէս շեշտում է հեղինակը: Եւ այս երեք գրութեք «Athenaeum»-ի ասելով ոչ-մասնագէտ ընթերցողի համար ամենահետադարձական մասն են կազմում այդ գրքի մէջ, այդտեղ գտնւում են Բաղդադի հինգ պաշարումների պատմութիւնը, որոնք նկարագրուած են շատ կենդանի լեզուով, մանաւանդ առաջին պաշարումը, երբ Հարուն Ալ Ռաշիդի որդի Ամինը 18 ամիս շարունակ պաշտպանւում էր իր եղբայր Մամունի զօրապետների դէմ: Թէ ինչու Դամասկոսը թողած՝ Աբբասեանները ընտրեցին Բաղդադը իրանց մայրաքաղաք՝ պարզ և համառօտակի բացատրուած է գրքում: «Նոր մայրաքաղաքը, ասում է հեղինակը Միջագետքի վերաբերմամբ, պէտք է աւելի դէպի արևելք լինէր, մօտ Պարսկաստանին, և առևտրական կարիքների համար պէտք է ունենար ջրային հաղորդակցութիւն ծովի հետ...»: Իններորդ դարում, մօտ 58 տարիների ընթացքում, թրքական պալատական զօրքերի բռնութեան շնորհիւ խալիֆատը տեղափոխուել էր Սամարրա, իսկ Բաղդադը մնում էր նահանգապետների իշխանութեան տակ, և այսպիսով եօթը թագաւորների ժամանակ Սամարրան եղաւ Աբբասեան խալիֆաների համար նոյնը, ինչ որ Աւինիօնը եղաւ միջնադարեան եօթ պապերի համար 1309 թուից մինչև 1371 թիւը:—Աբբասեան խալիֆաները ահագին գումարներ էին ծախսում պալատների վրայ և բոլորն էլ նոր շինութիւնների սիրահար էին: Սելջուկների գալուց յետոյ, երբ նրանք դարձան նուաճողերի ձեռքին լոկ խաղալիքներ, պալատներ կառուցանելը նրանց գլխաւոր զբաղմունքներից մէկն էր: Այն նկարագրութիւնները, որ թողել են ականատեսները նրանց պալատների և այգիների մասին, աւելի յիշեցնում են—Արաբական գիշերների էջերը, քան իրական երեւոյթներ... Իբրև դրան մի ապացոյց՝ հեղինակը պատմում է մի զարմանալի ծառի մասին, որ շինուած էր արծաթից և կշռում էր մօտ 160 փութ. դա կանգնած էր մի պալատի մէջ տեղում և չրջապատած էր մաքուր ջրի աւազանով... «Ծառը ունէր 18 ձիւղ, որոնք բաժանուած էին բաղմաթիւ մանր ձուղաւորութիւնների, և դրանց վրայ նստած էին զանազան տեսակ արհեստական թռչուններ ոսկուց և արծաթից, մեծ և փոքր: Զիւղերից շատերը արծաթից էին, մի քանիսը նոյն իոկ ոսկուց, և դրանք տարածուած էին օդի մէջ իրանց գոյնգոյն տերեւներով, որոնք շարժւում էին քամու հոսանքից, այն ինչ

Թուշուհները ծածուկ մեքենաների շնորհիւ խաղում էին և երգում...»

Լճնդոնում վաղուց ի վեր գոյութիւն ունի եգիպտական պարապմունքների համար հաստատուած մի ընկերութիւն՝ «Egypt Exploration Fund» անունով, որ հրատարակում Արեւելագիտութեան այդ ճիւղի վերաբերեալ ամենայն տեսակ ուսումնասիրութիւններ, չը խնայելով դրա համար ոչ մի միջոց. նա ուղարկում է զանազան գիտնական անձանց և խմբեր՝ տեղն ու տեղը պեղումներ անելու և նորանոր գիւտերով աւելի և աւելի լայն սփռելու հին Արեւելքի այս խորհրդաւոր երկրի պատմութեան և բնակիչների ազգաբանութեան վրայ... 1900 թուի վերջերում և ներկայ տարւոյ սկզբում հրատարակուել է այդ ընկերութեան նախաձեռնութեամբ և պրոֆեսորներ Գրեֆֆիթի և Դէվիսի աշխատութեամբ մի քանի հատորներ «Եգիպտոսի հնագիտական տեսութիւն» վերնագրով: Դրանցից առաջին հատորը տալիս է մեզ մօտ 400 հիերոգլիֆական նշաններ և զանազան պատկերներ, որոնք վերաբերում են Եգիպտոսի պատմութեան V-որդ հարստութեան չրջանին (մօտ 5000 տարի Քր. առաջ): Հրատարակիչը իր հիմնաւոր բացատրութիւններով աշխատում է՝ յենուելով դրանց վրայ՝ վերականգնել Եգիպտոսի հնագոյն ժամանակների պատմութիւնը: Նոյն նպատակին ծառայում է և նոր դուրս եկած այդ սերիայի IV-որդ հատորը, որ տալիս է բազմաթիւ կենդանիների, թռչունների և անօթների նկարներ, որոնք գտնուած են զանազան շիրիմների մէջ, նոյնպէս և պարիսպների վրայ. գլխաւորապէս այստեղ պատահում են այն թռչունները և կենդանիները, որոնք կրօնական նշանակութիւն ունէին: Բացի դրանցից, մի ընդարձակ հատոր «Հնագիտական շարժում» վերնագրով տալիս է այն բոլորը—ինչ որ 1899—1900 թուերի ընթացքում եգիպտագիտութիւնը կարողացել է ձեռք բերել զանազան խնդիրներում. մի քանի յայտնի գիտնականներ այստեղ զետեղել են իրանց ուսումնասիրութիւնները. դրանցից մէկը խօսում է «Եգիպտոսի մասին Գրիստոնէական չրջանում», միւսը «Յոյն-Հռոմէական Եգիպտոսի մասին», երրորդը «Եգիպտոսը Արաբների չրջանում». կայ մի առանձին հետազօտութիւն սրբագրերի (հիերոգլիֆների) մասին և այլն...

«The Literature» չաբաթաթերթը իր փետրուարի 16-ի համարում նուիրել է մի յօդուած Ռուսաստանի արդի գրականութեանը: Մի քանի խօսքով ծանօթացնելով ընթերցողներին գեներալ Սուլբօրօվի հետ, որի հարիւրամեակը տօնուեց անցեալ տարի Ռուսաստանում, հեղինակը բաւական ամփոփ տեղեկու-

թիւներ է տալիս մի քանի նորագոյն ուսաց հեղինակների և նրանց վերջին գրուածքների մասին, ինչպէս Վ. Կօրօլենկօ, Պ. Բօբօրիկին, Կոմս Լ. Տօլստոյ և այլն. յօդուածի վերջում նա կանգ է առնում Կ. Ռ.-ի բանաստեղծութիւնների հրատարակութեան վրայ և նրա մեղմ լրիւքական տաղանդը՝ համեմատում է Լերմօնտովի հետ:

Ճանապարհորդական ուղեցոյցների յայտնի հրատարակիչ Բեգեկէրը, որ եւրոպական բոլոր նշանաւոր երկիրների մանրամասն նկարագրութիւնը ունի հրատարակած Փրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուներով, այժմ ձեռնարկել է նոյնանման ուղեցոյցի հրատարակութեան՝ Ռուսաստանի մասին վերոյիշեալ երեք գլխաւոր լեզուներով, և անգլիերէն հատորը այս օրերս լոյս է տեսել Լօնդօնում...

Յ. ՔՈՉԱՐԵԱՆ